ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 19 § 01¦ դեկտեմբերի 2017թ.

Հետք պարբերականի լրագրող
Սեդա Ղուկասյանին

Հարգելի Սեդա Ղուկասյան,

Որպես ՀՀ ԱԺ պատգամավոր, օրենքով սահմանված կարգով, իրականացնում եմ բնակիչների ընդունելություն:

Վեցերորդ գումարման առաջին և երկրորդ նստաշրջանների ընթացքում անցկացրել եմ քաղաքացիների 8 ընդունելություն՝ յուրաքանչյուր ամսվա վերջին հինգշաբթի օրը: Ինչպես գիտեք 6-րդ գումարման խորհրդարանում հանդիսանում եմ ոչ միայն Ավան և Նոր Նորք վարչական շրջանների, այլ նաև Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի պատգամավորը , քանի որ նոր ընտրական օրենսգրքով թիվ 001 ընտրատարածքն ընդլայնվել է: Նշված ժամանակահատվածում ընդունել եմ 120 քաղաքացու, որոնցից 88-ը Ավան, 24-ը՝ Նոր Նորք, իսկ 8-ը՝ Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջանների բնակիչներ :

Բնակիչներն ինձ են դիմում հիմնականում սոցիալական, զբաղվածության, կրթական, առողջապահական, կոմունալ, կենցաղային, հազվադեպ օրենսրական: Քաղաքացիներին հուզող հարցերը շատ դեպքերում իմ՝ որպես ԱԺ պատգամավորի լիազորությունների շրջանակից դուրս է, բայց փորձում եմ ուղղորդել նրանց համապատասխան պատկան մարմիններ, հաճախ նաև ոլորտով զբաղվող հասարակական կազմակերպություններ ու հիմնադրամներ: Ինչպես օրինակ բարձրացվել են հարցեր, որոնք վերաբերել են բացառապես վարչական շրջաններում առկա կոմունիկացիոն, կոմունալ-կենցաղային համակարգերին, բարեկարգմանը, որոնք որպես թիվ 001 ընտրատարածքի պատգամավոր ներկայացրել եմ համապատասխան կառույցներին և հետևողական եղել դրանց լուծմանը:

Իմ պատգամավորական գործունեության սկզբից օրենքի շրջանակներում բազամաբնույթ հարցեր ստացել են լուծումներ, իսկ այն խնդիրները, որոնք ես ունակ չեմ լուծելու քաղաքացիներին բացատրել ու ներկայացրել եմ ազնվորեն, քանզի կան հարցեր, որոնք ոչ միայն իմ, այլ նաև որևէ պատգամավորի գործունեության դաշտից դուրս են:

Նշված ժամանակահատվածում բնակիչների կողմից ինձ է ուղղվել մոտ տասը գրավոր դիմում, որոնք առավելապես վերաբերում են ուսման վարձի փոխհատուցմանը, զինվորին տեսակցելու համար տրանսպորտային միջոց և գումար հատկացնելուն, ինձ հետ հանդիպելուն, աշխատանքի տեղավորմանը, Ավան վարչական շրջանում բարաելավման աշխատանքներին, աջ ղեկով ավտոմեքենաների շահագործման վերաբերյալ օրենսդրական փոփոխություններին: Դրանք համակարգային խնդիրներ ենք, որ կարող են լուծվել միայն պետության համալիր զարգացմանը զուգընթաց, որոնց վերացման ուղղությամբ մենք փոքր քայլերով առաջ ենք գնում:

Վեցերորդ գումարման խորհրդարանում աշխատում եմ տարածաքային կառավարման, տեղական ինքնակառավարման, գյուղատնտեսության և բնապահպանական հարցերի մշտական հանձնաժողովում: Բազմիցս իմ կողմից բարձրացվել են խնդիրներ, որոնք վերաբերում էին զոհված և հաշմանդամ զինծառայողների ընտանիքներին աջակցելու և նրանց իրավունքները պաշտպանելուն, ՏԻՄ-քաղաքացիներ շփումը առավել դյուրինացնելու և մի շարք այլ կարևոր հարցերի:

Հարգելի Սեդա Ղուկասյան, երբևէ չեմ եղել այն պատգամավորը, ում կատարած աշխատանքը գովազդվում եմ մամուլում ու սոցիալական ցանցում: Շատ խնդիրների լուծմանն են նպաստել, բայց երբեք չեմ ցանկացել ու ցանկություն չունեմ դրանց մասին հրապարակավ բարձրաձայնելու: Համոզված եմ, որ իմ աշխատանքի գնահատականը տալիս են իմ այն հայրենակիցները, որոնք երբևէ որևէ խնդրով դիմել են ինձ:

Կից ներկայացնում քաղաքացիների ընդունելությունից լուսանկարներ:

Հարգանքով՝ Ռոբերտ Սարգսյան